ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

նոյեմբերի 2020 թվականի № Ն
ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի №429Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին ստորագրված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածի 9.1 կետի 1-ին ենթակետի, և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ Ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման ԼՋ№0001 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների №3 հավելվածի 19-րդ կետի՝ 2020 թվականի օգոստոսի 7-ին Հանձնաժողով է ներկայացրել Ծառայությունների մատուցման 2021 թվականի սակագների վերանայման (ճշգրտման) հայտ՝ բաժանորդներին մատուցվող Ծառայությունների (այսուհետ՝ Մանրածախ ծառայություններ) սակագների գումարային մեծությունը հաշվարկելով յուրաքանչյուր խորանարդ մետրի համար 179.283 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), և Լիցենզիայի պայմանների №3 հավելվածի 13-րդ կետի հիման վրա՝ առաջարկելով Ծառայությունների մատուցման գործող

սակագները թողնել անփոփոխ նաև 2021 թվականի համար (Մանրածախ ծառայությունների սակագների գումարային մեծությունը՝ 180 դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը),

բ) Հանձնաժողովը Ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտման նպատակով Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի, Ընկերության և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը նախաձեռնել է մոնիթորինգ,

գ) Ծառայությունների մատուցման 2021 թվականի սակագների ճշգրտման գործոնների, այդ թվում նաև՝ մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգի արդյունքներով Հանձնաժողովի կատարած հաշվարկների համաձայն՝ Մանրածախ ծառայությունների սակագների գումարային մեծությունը յուրաքանչյուր խորանարդ մետրի համար կազմում է 178,247 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

դ) Լիցենզիայի պայմանների №3 հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ հաշվարկային տարվա Մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված սակագնի և հաշվարկային տարվան նախորդող տարվա Մանրածախ ծառայությունների մատուցման գործող սակագնի տարբերությունը, Ընկերության և Հանձնաժողովի փոխադարձ համաձայնությամբ՝ նույն կետով նախատեսված ճշգրտումից հետո, կարող է հաշվի առնվել հաջորդ կամ հետագա տարիների սակագները հաշվարկելիս,

ե) 2022 թվականին նախատեսվում է Մանրածախ ծառայությունների բազիսային սակագների աճ և նպատակ ունենալով մեղմելու այդ աճը՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության հետ քննարկվել է 2020 թվականի համար գործող Մանրածախ ծառայությունների սակագների (գումարային 180 դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) և 2021 թվականի համար նախատեսվող սակագների տարբերությունը (գումարային 1.753 դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) 2022 թվական տեղափոխելու հարցը,

զ) Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակի 2020 թվականի նոյեմբերի 19-ի №04/03.8/49928-2020 գրությամբ ստացվել է վերջինիս դիրքորոշումը՝ Մանրածախ ծառայությունների գործող սակագների (գումարային 180 դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) և 2021 թվականի համար նախատեսվող սակագների տարբերությունը (գումարային 1.753 դրամ/խորանարդ մետր՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) 2022 թվական տեղափոխելուն չառարկելու վերաբերյալ,

է) Ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 13-ի №ՄԾ/24736 գրությամբ տվել է իր համաձայնությունը՝ Հանձնաժողովի կողմից 2021 թվականի համար հաշվարկված և Ծառայությունների մատուցման 2020 թվականի համար գործող Հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 20-ի №429Ն որոշմամբ սահմանված Մանրածախ ծառայությունների գումարային սակագների տարբերությունը Լիցենզիայի պայմանների 16-րդ կետով նախատեսված ճշգրտումից հետո հաշվի առնել 2022 թվականի սակագների հաշվարկներում,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 79.1-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №296Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝
   1) բաժանորդներին խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 127.5 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 153,0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   2) բաժանորդներին ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 22.5 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 27.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   3) ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին՝

      ա. խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 30.0 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 36.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

      բ. ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 15.0 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 18.0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   4) «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման

սակագինը՝ 9.184 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.021 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 20-ի «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 28-ի №434Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №429Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2020թ.